ՊՈՂՈՍ ՏԱՐՈՆԱՑԻՆ ԹՈՆԴՐԱԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ. Գ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Բագրատունյաց թագավորության վերջին տասնամյակներում Արևելքում հզորանում են սելջուկ-թուրքերը։ Վերջիններիս առաջխաղացումից վախենալով, Բյուզանդական կայսրությունը ձգտում էր ամրացնել իր արևելյան սահմանները և հատկապես՝ ամրանալ Հայկական լեռնաշխարհում։ Զանազան խարդավանքներով այս ձգտումը իրագործվեց 967 թ.՝ Տարոնի մեծ մասի, 1000 թ.՝ Տայքի, 1021 թ.՝ Վասպուրականի և, վերջապես, 1045 թ.՝ Անիի թագավորության գրավումով։ Նվաճված Հայաստանում բյուզանդացիները ծավալում էին հատկապես դավանական հալածանք։ Նրանք ցանկանում էին Հայաստանի քաղաքական անկախությունը վերացնելուց հետո վերացնել նաև հոգևոր անկախությունը[1]։ Ահա այս քաղաքականությունը նկատի ունենալով, XI դարի վերջին և XII-ի I քառորդում ապրած մատենագիր Պողոս Տարոնացին գրում է. «...Իսկ սին և ժանդ, պիղծ և վատթար արանցդ, որք են ի մեր ժամանակս թագաւորքդ և իշխանքդ, մորոսամիտք եղեալք՝ հայհոյեն զհայս և նախատեն», և թողած այլազգիներից եկող վտանգը, «ընդ մեզ պատերազմին»[2]։ Բյուզանդական այս անխոհեմ քաղաքականությանը հետևում է սելջուկների արշավանքը, և արդեն Մանազկերտի ճակատամարտից հետո Բյուզանդիան զրկվում է հայկական հողերից[3]։ Սոսկալի ավերումների ու կոտորածների առաջին զոհ էր դառնում Հայաստանի դաշտային՝ անպաշտպան շրջանների բնակչությունը։ Համեմատաբար իրենց ինքնուրույնությունը պահպանել էին Զորագետի Կյուրիկյան, Կապանի Սյունյաց թագավորությունները և Սասունի ու Մարաշի հայկական անկախ իշխանությունները։ Ուստի պատահական չէ, որ անկախություն ունեցող այս շրջաններն էլ պայքարում էին բյուզանդական դավանական հալածանքների դեմ։ Ինչպես նշում է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը՝ «Հույն-բյուզանդական և հարակից մտայնության դեմ հայ իրականության մեջ գաղափարական պայքար էր մղվում ԺԱ—ԺԲ դարերում երկու ճակատով։ Դրանցից մեկն էր «Հյուսիսային վարդապետներ»-ի մղած պայքարը, ղեկավարությամբ խոշորագույն գիտնական... Հովհաննես սարկավագ... Հաղբատեցու...։ Պայքարի երկրորդ ճակատը ղեկավարում էին Տարոնում, «Հարավային վարդապետներ»-ը,

---

1 Երկարնակների սրրագործած քաղաքական այս գիծը չարունակվեց նաև հետագայում, Կիլիկյան Հայաստանում։ Տե՛ս Հ. Անասյան. Վարդան Այդեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ, «Բազմավեպ», 1968, էջ 246։

2 «Թուղթ երանելւոյն Պօղոսի Տարօնացոյ յաղթող ախօյեան վարդապետի՝ ընդդէմ Թէոփիստեայ հոռոմ փիլիսոփային», Կ. Պոլիս, 1752, էջ 274։

3 Ս. Տ. Երեմյան. Լիպարիտ գորավարը և նրա նախորդները. «Ն. Մառի անվան կարինետի աշխատություններ», 1947, № 3, էջ 171։

որոնց գլխավորում էր Պողոս Տարոնեցին։ Հովհաննես Սարկավագ Վարդապետ Հաղբատեցու և Պողոս Տարոնեցու՝ այս երկու պայծառ դեմքերի՝ ուսերին էր ծանրանում գաղափարական պայքարն ընդդիմադիր ուժերի ոտնձգությունների դեմ»[4]։

Եթե Հյուսիսային վարդապետների առաջնորդ Հովհաննես Իմաստասերի գրական ժառանգությունը հանգամանորեն ուսումնասիրվել է՝, ապա Հարավային վարդապետների ճանաչված առաջնորդ Պողոս Տարոնացին դեռևս չուսումնասիրված հայ մատենագիրներից է։ Աղբյուրների կցկտուր վկայությամբ, նա ապրել և ստեղծագործել է Տարոնի Առաքելոց կամ Ղազարի վանքում, XI—XII դդ., նրա օրոք մշակութային այդ կենտրոնը բարձր ծաղկման էր հասել։ Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ, մեծ գիտնականի համբավ վայելող Պողոս Տարոնացին մահացել է հայոց ՇՀԲ (1123) թ. «Յայսմ ամի (։ՇՀԲ։) մեռաւ մեծ իմաստասէրն Հայոց Պողոս վարդապետն. սա երևեալ այր հրաշալի, տեղեակ Հին և Նոր կտակարանացն, առաջին սուրբ վարդապետաց, երկրորդ լուսաւորիչ երևեալ Տանս հայոց և վէմ ադամանդեայ ընդդէմ հերձուածողաց...»[6]։ Տարոնացու վաստակը բարձր են գնահատել թե՛ իր ժամանակակիցները, թե՛ հաջորդ սերունդները։ Այդ են վկայում Մատթեոս Ուռհայեցու հաղորդած տեղեկությունները և իրենից՝ Տարոնացուց, մեզ հասած մի քանի աշխատությունների մոտ 90 ընդօրինակությունները։ Դրանք վերաբերում են հայ դավանաբանական պայքարի պատմությանը և լույս են սփռում XI—XII դդ. Հայաստանում գոյություն ունեցող ներքին և արտաքին հասարակական հարաբերությունների վրա։

Տարոնացու գլխավոր երկը «Թուղթ երանելւոյն Պողոսի Տարոնացոյ յաղթող ախոյեան վարդապետի ընդդէմ Թլոփիստեայ հոռոմ փիլիսոփային» աշխատությունն է։ Ըստ հիշատակությունների[7], Թեոփիստեն Միջագետքի կառավարիչ Առոն իշխանի դպրապետն էր, և նրա հրամանով դավանաբանական թուղթ է գրել և ուղարկել Տարոնի Զորտվանել իշխանին (1073—1127)[8]։ Վերջինս այս թուղթը 1101 թ. օգոստոսին ուղարկել է Մուշի Առաքելոց վանքի վանահայր Պողոս վարդապետին՝ պատասխանը գրելու։ Տարոնացու առաջաբանում կարդում ենք՝

«...Իսկ ես նուաստ ծառայս աստուծոյ... վարդապետս Պողոս, զթուղթս զոր գրեցիք՝ ընկալեալ ընթերցայ, և հասու եղէ ամենայն գրելեացս, որ ի նամակի աստ, զոր առաքեցիք յառաջնմէ, և բերաւ առ իշխանն Հայոց Սասանու՝ առ Նովերսիմոսս Զորտուանելս, որ յաթոռն կայ, և նոյն ժամայն առ մեզ հասուցին զգիրս քոյ, յամսեանն օգոստոսի, և ի թուականութեանս Հայոց ՇՄ և բերաւ ի վանքս Ղազարու։ ...Եւ ես առ քեզ պատասխանի համառօտ բանիւր փոքր ի շատէ»[9]։

---

4 Լ. Մելիքսեթ-Բեկ, Պողոս Տարոնեցի..., «Էջմիածին», 1960, № 4, էջ 38։

5 Ա. Գ. Արարատյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956։ ლ. მელიქსეთ-ბეგი, „ჩოდიღა მხარეთა სომეხთა მთძღვარნი" და მათი ეინათბა, ტფ. 1928.

6 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 355։

7 Տե՛ս Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 316։

8 Զորտվանելի մասին տե՛ս Ն. Ակինյան, Թոռնիկյանց ճյուղագրությունը, «Մատենագրական հետազոտություններ», հատ. Դ, Վիեննա, 1938, էջ 49—88։

9 Պողոս Տարոնացի, նշվ. աշխ., էջ 13։

Տարոնացին գիտնականի մեծ հմտությամբ և բարեխղճությամբ է կատարում իր պատվիրատուի ցանկությունը։ Նույն 1101 թ. գրում է Թեոփիստեի թղթի համառոտ պատասխանը՝ «Պատճառն հարցաքննութեան ընդ հայք և ընդ հոռոմս» վերնագրով, իսկ իր կյանքի վերջին շրջանում՝ 1122—1123 թթ., ընդառաջելով մերձավորների խնդրանքին, ընդարձակում է այն և դարձնում ծավալուն մի երկասիրություն[10]։

Թեոփիստեի՝ Զորտվանելին հղած թղթից փոքրիկ հատվածներ պահպանվել են Տարոնացու աշխատություններում, որտեղից և պատկերացում ենք կազմում նրա շոշափած հարցերի մասին։ Այստեղ պարզ երևում է, թե ինչպես «երկաբնակ Առօն» և «միաբնակն Զորտուանել» իշխանների բանակների փոխարեն բախվում են XI—XII դդ. գերիշխող հասարակական-քաղաքական գաղափարները։ Թեոփիստեի և Տարոնացու ընդդիմադիր աշխատությունների հիմնական առանցքը հայ-բյուզանդական հարաբերություններն են, սկսած V դարից՝ քաղկեդոնական խնդիրներից, մինչև XII դարը, դարձյալ քաղկեդոնական խնդիրները, որոնք, սակայն, ունեին գերազանցապես քաղաքական բովանդակություն։ Այնուամենայնիվ XII դարում կայսրությանը հուզող հիմնական հարցը Հայաստանի քաղաքական դիրքորոշման խնդիրն էր և ոչ թե Քրիստոսի բնության, որի անվան տակ բյուզանդական կառավարող շրջանները քողարկում էին իրենց ագրեսիվ մտադրությունները։

Թեև կողմերը հիմնականում ծանրանում են դավանաբանական ու ծիսական բնույթի հարցերի վրա, բայց հաճախ շոշափում են նաև ժամանակակից հասարակությանը հուզող արժեքավոր հարցեր։ Հատկապես կարևոր են Տարոնացու հաղորդած տեղեկությունները Թոնդրակյան շարժման մասին։

IX դարից սկսած Հայաստանը թևակոխում է զարգացած ֆեոդալական հարաբերությունների շրջան։ Այս ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական պատմության առանձնահատուկ կողմերից մեկը դասակարգային պայքարի նոր վերելքն էր[11], որ մղում էին գյուղացիները ֆեոդալների դեմ Թոնդրակյանների դրոշի ներքո։ Պաշտոնական եկեղեցին և հայ բուրժուական պատմագրությունը[12] այս շարժումը համարում են սոսկ աղանդավորական և հայ իրականությանը խորթ մի երևույթ։ Սակայն չպետք է մոռանալ, որ այս շարժման գաղափարախոսները հավասարություն և ազատություն էին պահանջում նաև կյանքի այլ ասպարեզներում։ Առհասարակ եկեղեցական կազմակերպությունները հանդես էին գալիս որպես ամեն մի իշխանություն նվիրագործող կազմակերպություններ, ուստի «... ֆեոդալիզմի դեմ մղվող ամեն մի պայքար այն ժամանակ պետք է կրոնական զգեստավորում ընդուներ, ամենից առաջ եկեղեցու դեմ ուղղվեր»[13]։

Թոնդրակյան շարժման ուսումնասիրման կարևորությունը իր վրա է հրավիրել շատ տնվանի հայագետների ուշադրությունը[14], սակայն նրանց սկզբնաղ-

---

10 Նույն տեղում, էջ 329։

11 Հմմտ. Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XI դդ., Երևան, 1956, էջ 347։

12 Հմմտ. Բ. Սարգիսյան, Ուսումնասիրություն Մանիքեա-Պավղիկյան Թոնդրակեցիների աղանդն և հր. Նարեկացու թղթը, Վենետիկ, 1893։

13 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հատ. 2, Երևան, 1950, էջ 123։

14 Տե՛ս Բ. Սարգիսյան, նշվ. աշխ., Per-Mkrtich [illegible], Die Paulikianer

բյուրների ցանկում[15] հաղվադեպ է հիշվում Պողոս Տարոնացու անունը[16], որը, ի դեպ, ապրած լինելով XI—XII դդ., քաջ ծանոթ էր թոնդրակյան շարժման մանրամասնություններին և չնայած որոշակի զսպվածության, կարևոր տեղեկություններ է հաղորդում, որոնք լույս են սփռում թոնդրակյան շարժման հետ կապված որոշ հարցերի վրա։

Վիճելի կամ տարակարծությունների տեղիք տվող հարցերից մեկը թոնդրակյանների և նրանց նախորդած սոցիալական շարժումների, հատկապես պավլիկյանների, կաղափարական կապի խնդիրն է։ Նախորդ աղբյուրները ընդհանուր ձևով թոնդրակյաններին կապում են այլ շարժումների հետ, բայց այդ կապի մասին որոշակի համարյա ոչինչ չեն ասում։ Այդ հիման վրա Ա. Հովհաննիսյանը ենթադրում է, որ պավլիկյանների և թոնդրակյանների զաղափարախոսական կապը հատկապես ուժեղ է եղել վերջիններիս սկզբնավորման ժամանակ, այլ կերպ ասած՝ պավլիկյանների գործունեության մայրամուտին ասպարեզ իջած թոնդրակյանները նրանց հետ ունեցել են որոշակի շփման կետեր[17]։

Այս ենթադրությունը հաստատում է Պողոս Տարոնացին, թոնդրակյաններին և նրանց առաջնորդ Սմբատ Զարեհավանցուն համարելով պավլիկյանների հետևորդներ։ «Զայս արարին թոնդրակեցիքն... զոր դուք պապլիկանոսք ասեք,— գրում է Տարոնացին Թեոփիստեին հղած թղթում,— սոքա էին աշակերտք պղծոյն Սմբատայ, այն որ դեղեցաւ յաղանդոյն պապլիկեան ազգէն»[18]։

Բերված հատվածը թույլ է տալիս ենթադրել, որ բյուզանդացիները թոնդրակյաններին նույնացրել են պավլիկյանների հետ[19]։ Թոնդրակյանների և պավլիկյանների մերձեցումը շարունակվում է նաև IX դարի 70-ական թթ. հետո,

---

im Byzantinischen Kaiserreiche und verwandte Ketzerische Erscheinungen in Armenian, Leipzig, 1893. Ս. Պողոսյան, նշվ. աշխ.։ Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հատ. Ա, Երևան, 1957։ Նույնի՝ Движение Тондракидов в Армении в IX—XI вв., «Вопросы истории», 1954, № 10։ Ա. Մնացականյան, Թոնդրակյան շարժման մի քանի գլխավոր հարցերի մասին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1954, № 3, էջ 63—84։ Գ. Տեր-Մկրտչյան, Անանիա Նարեկացի, «Արարատ», 1892, № 1, էջ 1—5։ К. Юзбашян, Тондракидское движение в Армении и павликиане, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 9, էջ 31—44։ Վ. Համազասպյան, Թոնդրակեցիների շարժման էպոխան և զաղափարախոսությունը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1949, № 3, էջ 37—66։

15 Դրանք են՝ «Ստ. Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, 1888։ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Աղեքսանդրապոլ, 1910։ Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, Երևան, 1963։ Գրիգոր Նարեկացի, Թուղթ ուղղված Կճավա վանքին, «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 498—502։

16 Գ. Տեր-Մկրտչյանը (տե՛ս նշված աշխատության հայերեն թարգմանությունը, Երուսաղեմ, 1938, էջ 149—153) և Ա. Հովհաննիսյանը (տե՛ս «Դրվագներ...», հատ. Ա, էջ 299—348) օգտագործել են Պողոս Տարոնացու միայն հրատարակված տեղեկությունները։

17 Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Դրվագներ..., հատ. Ա, էջ 363։

18 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1154, էջ 240բ և № 671, էջ 74բ։

19 Հենվելով Աննա Կոմնենայի հաղորդած տեղեկությունների վրա, Հ. Բարթիկյանը գեռևս 1957 թ. ապացուցել է, որ իրոր բյուզանդացիները թոնդրակեցիներին անվանում էին պավլիկյաններ։ Տե՛ս Հ. Բարթիկյան, Պավլիկյանների առասպելական ծագումը..., ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 1, էջ 89։

երը կայսրության կողմից հալածված պավլիկյանների մնացորդները ապաստանում են Թոնդրակյանների մոտ[20]։

Տարբեր ժամանակներում հանդես եկած լինելու հետևանքով նրանց սոցիալ-քաղաքական և դաղափարական պահանջները այլ էին, սակայն Թոնդրակյանները, սնվելով պավլիկյանների գաղափարական ակունքներից, նոր եռանդով շարունակեցին վերջիններիս ավանդական պայքարը։

Թոնդրակյանների կիրառած պայքարի ձևերի և շարժման ընդգրկած տարածքի վերաբերյալ ևս Տարոնացին հայտնում է կարևոր տեղեկություններ։ Նախորդ աղբյուրներից հայտնի է, որ Թոնդրակյանների գործունեությունը աշխուժացել էր հատկապես Հարքում, Ռշտունիքում, Վասպուրականում, Մոկաց աշխարհում, Սյունիքում, Շիրակում և այլուր[21]։ Գրիգոր Մագիստրոսի՝ Ասորոց կաթողիկոսին ուղղված թղթից ենթադրվել է, որ Թոնդրակյան շարժումը ծավալվել է նաև Ասորիքում[22]։ Սրանք թեև համոզիչ, բայց և այնպես ենթադրություններ են։ Տարոնացին այստեղ ևս գալիս է լրացնելու աղբյուրների վերոհիշյալ կռահումները. «...Աղանդաւորք... թագստեամբ շրջեալ բնակին յաշխարհս տաճկաց որ նստ (որպես Նեստոր—Հ. Մ.), որ բնակեցաւ ի մեջ քաղդեացոցն։ ...Իսկ նոքա ի ձեռն աղանդաւոր արատոյն իւրեանց յազգէ հաւատացելոց ի փախուստ լինին և ի մէջ տգիտացն շրջին։ Եւ քակեն զպակասամիտսն ի հաւատոցն Քրիստոսի և բանակռիւ լինին ընդդէմ ճշմարտութեան Քրիստոսի։ Եւ յորժամ յաղթին ի զինուորացն Քրիստոսի՝ ի թշնամիքն Քրիստոսի ապաստանին ի Թուրք կամ ի տաճիկ...»[23]։

Բերված հատվածը նախ հաստատում է, որ իրոք Թոնդրակյանները ունեցել են տերիտորիալ լայն ընդգրկում, երկրորդ՝ լույս է սփռում նրանց պայքարի ձևերի ու մեթոդների վրա։ Նրանք պայքարում էին երբեմն գաղտնի, երբեմն բացարձակ, իսկ այդ պայքարում ծանր կացության մեջ ընկած պահին ապաստանում էին նույնիսկ Քրիստոսի թշնամիների՝ այսինքն Թուրքերի և արաբների մոտ[24]։ Թոնդրակյանները փաստորեն պայքարում էին երկու ճակատով՝ հայրենական պաշտոնական եկեղեցու և բյուզանդական ագրեսիայի դեմ։ Թոնդրակյան շարժումը չսահմանափակվեց հայ իրականության նեղ շրջանակներում, այլ, «մի շարժում էր այդ,— նշում է Ա. Հովհաննիսյանը,— որը հանդիսանում էր... Միջին և Առաջավոր ասիական երկրներում համատարած հակաֆեոդալական-գյուղացիական պայքարի բաղկացուցիչ մասը»[25]։

Մի քանի կողմնակի տեղեկություններ հիմք են տալիս ենթադրելու, որ Թոնդրակյան պայքարը չի դադարել անգամ այն դաժան հալածանքներից հետո, որ կազմակերպեց նրանց դեմ Գրիգոր Մագիստրոսը։

---

20 Ա. Հովհաննիսյան. Դրվագներ..., հատ. Ա, էջ 377։ Հմմտ. К. Юзбашян, Նշվ. աշխ., էջ 31—44։

21 Ս. Պողոսյան. Նշվ. աշխ., էջ 411—450։

22 Ա. Մնացականյան. Նշվ. աշխ., էջ 82։

23 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N 1154, էջ 141ա և N 671, էջ 74բ։

24 Ի դեպ, այդպես էին վարվում նաև պավլիկյանները, որոնք արարական տիրապետության վաղ շրջանում, օգտվելով նրանց ժամանակավոր հովանավորությունից, պայքարում էին բյուզանդացիների և հայկական եկեղեցու դեմ։ Տե՛ս «Յովհաննու Իմաստասիրի Աւանդեցոյ Մատենագրութիւնք», ի Վենետիկ, 1834, էջ 78։

25 Ա. Հովհաննիսյան. Դրվագներ..., հատ. Ա, էջ 368։

Վերևում հիշված թուրքերը հավանաբար հենց թուրք-սելջուկներն են, որոնք XI դարի 70-ական թվականներին նվաճեցին Մերձավոր Արևելքը։ Եթե այս ենթադրությունը ճիշտ է, ապա պարզվում է, որ թոնդրակյանները իրենց պայքարը հոգևոր և աշխարհիկ տերերի դեմ շարունակել են թուրք-սելջուկների հաստատվելուց հետո ևս։ Այն հանգամանքը, որ Տարոնացին XII դ. I քառորդում այս հարցին անդրադառնում է բավականին կրքոտությամբ, հիմք է տալիս համոզվելու, որ թոնդրակյան շարժումը XII դարում ևս ունեցել է որոշ արդիականություն։ Թոնդրակյանների գոյատևման հարցը ավելի որոշակի կդառնա, երբ նկատենք, որ հենց Մագիստրոսի հալածանքներից հետո փրկվել էին բավականին թոնդրակեցիներ, որոնց և վերջինս ուղղել է իր նամակներից մեկը[26]։

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը անդրադառնալով Պողոս Տարոնացու գրական ժառանգությանը, նշում է, որ Տարոնացին, ի թիվս այլ նորությունների, տալիս է նաև «Թոնդրակյաններին հաղորդակից և նրանց շարժման մասնակից մեկի անունը, որը անհայտ է այլ աղբյուրներից (և նույնիսկ մտած չէ Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի» մեջ), այն է՝ «Ապելլա»-ի»[27]։

Իրականում Տարոնացին թոնդրակյաններին համեմատում է այլ շարժումների՝ էպիկուրյանների, մանիքեցիների և այլոց հետ և հայտնում հետաքրքիր մտքեր։ Հիշյալ «Ապելլան» ոչ թե թոնդրակյան շարժման մասնակից է, այլ մանիքեական. նրա մասին հանգամանորեն խոսում է Եվսեբիոս Կեսարացին[28], անունը մեջ բերելով «Ապեղէս» ձևով, որից օգտվելով Տարոնացին «Ապեղէս»-ը դարձրել է «Ապելլաս»։

Ըստ Տարոնացու, թոնդրակյանների գաղափարախոսությունը բավականին արմատական էր։ Նրա տեղեկություններից կարելի է ենթադրել, որ թոնդրակյանները քարոզում էին, թե մարմնի հետ միասին մահանում է նաև հոգին. «Սուրբ գրոց ոչ հաւատան և ընդունին,— դառնացած գրում է Տարոնացին,— և ասեն, թէ այն որ մեռաւ՝ ապականեալ կորեաւ։ Խոտոց և ծառոց նմանեցուցանեն զայս կենցաղս։ Եթէ որպէս խոտն կորեալ այլ ոչ կենդանանայ, այլ արմատն նորա կենդանանա»[29]։

Մարդկային կյանքը թոնդրակյանները համեմատում էին բնության երևույթների հետ և հանգում իրականության որոշակի ըմբռնմանը։ Հոգու անմահության և հանդերձյալ կյանքի մերժումից հետո թոնդրակյանները հետևողականորեն մերժել են նաև վերջին դատաստանը և դրա համար կատարվող բոլոր եկեղեցական խորհուրդները՝ հատկապես պատարագը։ Եկեղեցական արարողությունները մերժող թոնդրակյանները մերժում էին նաև եկեղեցին, նրա նվիրատվությունը, սրբավայրերը, խաչափայտը և այլն։ Սուրբ խաչին լոկ փայտ են ասում,— տրտնջում է Տարոնացին և ավելացնում. «Վասն զի աղջ մի որ դհաւատոյն վկայ և հաստատութիւն և աստուած ոչ ունի, նորա ոչ է պիտոյ խաչն՝ կամ եկեղեցին»[30]։

Նախորդ աղբյուրները խիստ ընդհանուր ձևով են ներկայացնում թոնդրակյանների գաղափարախոսության որոշ կետեր՝ հատկապես եկեղեցու ժրխ-

26 Տե՛ս «Դրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 164։

27 Լ. Մելիքսեթ-Բեկ, Պողոս Տարոնեցի..., էջ 43։

28 «Եվսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ», Վենետիկ, 1877, էջ 368—371։

29 Պողոս Տարոնացի, նշվ. աշխ., էջ 264։

30 Նույն տեղում, էջ 260։

տումը։ Հայտնի է, որ Թոնդրակյանները նույնիսկ քանդում էին եկեղեցիները[31], բայց այդ ժխտման հիմնավոր տեսական պատճառաբանությունը չի ներկայացված որևէ աղբյուրում։ Տարոնացին տալիս է այս հարցի արժեքավոր մանրամասնություններ։ Բոլոր քրիստոնյա ժողովուրդները, հայտնում է նա, ունեն իրենց եկեղեցիները, որպես աստծո տուն, «իսկ անիծեալ Թոնդրակեցիքն ի նախատինս և ի հայհոյանս զսայ համարեցան, եթէ՝ այս եկեղեցիս քար է և հող անբարբառ, եկեղեցի մենք եմք, որ բանաւոր եմք»[32]։

Պարզվում է, որ Թոնդրակյանները եկեղեցին համարել են հասարակ տուն, կառուցված անբարբառ քարից և հողից, միանգամայն գուրկ երկնային շնորհներից։ Այստեղից պարզ է նաև, որ Թոնդրակյանները մեծ դեր էին վերագրում մարդուն։ Եկեղեցին մարդն է, որ բանականություն ունի, որ կարող է խոսել և մտածել, իր խոհերն ու ձգտումները անհրաժեշտության դեպքում հաղորդել նաև աստծուն առանց եկեղեցու և եկեղեցականների միջամտության։

Այսպիսով, Թոնդրակյանները երկնային շնորհատուր հատկություններ վերագրում էին միայն անհատին, բանականություն ունեցող մարդուն։ Թոնդրակյան շարժման պատմությամբ զբաղվող մասնագետները միաբերան հաստատում են, որ Թոնդրակյանները իրենց վարդապետությունը գրի են առել, այլ կերպ ասած՝ ունեցել են իրենց գրականությունը, որը ոչնչացվել է պաշտոնական եկեղեցու կողմից։ Սկզբնաղբյուրների պարունակած տեղեկություններն այս մասին շատ աղոտ ու անորոշ են[33]։ Տարոնացին ևս հաստատում է Թոնդրակյան գրականության առկայությունը։

«...Արդ նոքա (Թոնդրակեցիները) ի լեզուս մեր խոսին և ի լեզուս մեր ընթեռնուն՝ լոկ առանց հաւատոյ, և ի գրոց բանից ջանան պատրել զտգէտսն»[34]։

Պարզվում է, որ Թոնդրակյանները ոչ միայն բանավոր քարոզներով ու զենքով էին պայքարում, այլև գրչով։ Նրանք խոսում և գրում էին հայերեն, թեև այդ նույն գրով ջանում էին խաբել, «պատրել տգետներին»։ Այս պարագայում նրանց շարքերում գիտուն գործիչների առկայությունը ևս չի բացառվում։ Մեծ ընդգրկում ընդունած հուժկու այս շարժումը ուղղված էր տիրող հասարակարգի, նրան սրբագործող պաշտոնական եկեղեցու ու արտաքին ագրեսիայի դեմ։

Ինչպես տեսնում ենք, այս շարժման արժանահիշատակ աղբյուրներից մեկը XI—XII դդ. մատենագիր Պողոս Տարոնացին է, որի հաղորդած տեղեկությունները երբեմն նորություն են, երբեմն էլ հաստատում են նախորդ աղբյուրներում եղածը։ Նկատենք նաև, որ 1123 թ. մահացած Պողոս Տարոնացու տեղեկությունները որոշ կարևոր հարցերում տարբերվում են նախորդներից։ Կարելի է ենթադրել, որ Տարոնացին Թոնդրակյան շարժման վերաբերյալ իրեն հայտնի տեղեկությունները քաղել է իր ժամանակակիցներից, ուստի XII դարի առաջին քառորդում ևս Թոնդրակյան պայքարը ունեցել է որոշ արդիականություն։

---

31 Տե՛ս Ա. Լաստիվերտցի, էջ 128։

32 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N 1154, էջ 141բ։ Հմմտ. ձեռ. N 671, էջ 75ա։

33 Տե՛ս «Գիրք թղթոց», էջ 501—502։

34 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N 1154, էջ 141ա։

ПОГОС ТАРОНАЦИ О ТОНДРАКИЙСКОМ ДВИЖЕНИИ

Г. Г. МАНУЧАРЯН

(Резюме)

Погос Таронаци является одним из неизученных авторов XI—XII вв. До нас дошли некоторые его работы, которые проливают свет на общественно-политические отношения в Армении в XI—XII вв. В них особенно ценны сведения о социальном движении тондракийцев. Новый материал, знакомящий нас с формами и методами борьбы тондракийцев, дает основание полагать, что они продолжали борьбу и во второй половине XI в. Выясняется, что тондракийцы имели свою литературу и вели письменную пропаганду.